# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

<< 4 >> սեպտեմբերի 2014 թվականի N 209 -Ա ք.Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշմամբ հաստատված <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման)>> ընդհանուր կարգի 12-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2007 թվականի հունվարի 26-ի N 24-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի անցկացման>> ընթացակարգի 6-րդ կետի դրույթները.

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝**

Ձևավորել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու ժողովրդական գործիքների նվագախումբ>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի մրցութային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

Ֆ.ՑՈԼԱԿՅԱՆ

*Իսկականի հետ ճիշտ է՝*

Հավելված

ՀՀ Շիրակի մարզպետի 2014 թվականի
սեպտեմբերի 4-ի N 209 -Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | |
|---|---|
| Սեյրան Պետրոսյան | - ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ (հանձնաժողովի նախագահ), |
| Տիգրան Ղարիբյան | - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ (հանձնաժողովի քարտուղար), |
| Ալբերտ Մարգարյան | - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակամի քաղաքաշինության վարչության պետ, |
| Գրիգոր Պապոյան | - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ, |
| Սեդա Մինասյան | - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ: |

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ.ՊՈՂՈՍՅԱՆ